

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

3.7. ԲԻՐՈՅԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
R.F. BUREAU  
LIBRARY  
Addressé "Droschak"  
Rédaction du "Droschak"

Rédaction du "Droschak"

GENÈVE (Suisse)

## “ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### Ա Ի Ե Լ Ո Ր Դ Ի Ա Ս Մ Ը

Համիդին արիւնծարաւ բնազդները նոր դարձօնք մը ունեցան:

Արէտէն թատր կը հանդիսանայ վերստին անլուր վայրագութիւններու, որոնց մենաշնորհը Հայաստանին վերապահած կը կարծուէր:

Ջարդը նորութիւն մը չէ Թիւրքիոյ համար. բայց բան մը որ չէր սպասուեր ան է որ մահմէդականները յանդգնեցան ձեռք բարձրացնել անգլիական պահանջող գունդին վրայ, վերաւորեցին ու սպաննեցին 50-էն աւելի զինուոր, այրեցին անգլիական փոխ-հիւպատոսը իր տան մէջ և կրակի տւին միւս հիւպատոսարանները...

Պատահական բան մը չէր այդ ջարդը, աւելորդ է ըսել թէ կանխաւ հինաւոր դաւ մըն էր ատ, որուն ծայրերը Երլազի դժոխքին մէջ կը կորուսին...

Գլուխ կտորելու ալ պէտք չկայ շարժառիթը գտնելու համար. կղզիին վարչութիւնը ձեռքէ երթալու վրայ էր, ինքնավարութեան առաջին հիմնաքարը կը դրուէր. ծովակալները արդէն ձեռք դրած էին Արէտէի մաքսերուն և տասանորդներուն վրայ... Տակն ու վրայ եղաւ Երլազը. բան մը ընելու էր: Վայրկեանն ալ պատեհ էր կարծես. Գրանսան օրհասականի ճիգեր կ'ընէր ոտքերն ազատելու Դրէյֆիւսեան ճահիճէն. Ռուսիան աւանջը չհնական պարսպին դրած՝ Պէքիի մէջ անցած-դարձածին կը նայէր պլած. սրտատրոփ. Անգլիան Օմ գուրմանի պարիսպներուն առջև հասած՝ տակաւին չէր իջուցեր իր երկաթի թաթը խալիֆի գանգին...

Պատեհ կարծեցին վայրկեանը ուժի փորձ մը ընելու և հին՝ արդէն մաշած հնաբք մը նորէն մէջ նետեցին — թիւրք ամբոխի մ ու ե ո ա ն դ ու թ իւ ն ը: Համիդը փաստ մը կ'ուզէր ունենալ ձեռքը՝ ապացուցանելու թէ ծովակալներն անկարող եղած էին կղզին խաղաղեցնելու: Եւ մէկ քարով երկու թռչուն բռնելու տենչով, հարածը չուղղեցին բոլոր այն կէտերը, ուր մաքսատներն անցած էին. ծովակալներուն ձեռքը, այլ Կանդիա, որուն հսկողութիւնը յանձնուած էր անգլիացի նաւազներուն, զաւակները այն երկրին, որ Համիդին «գրողն» է, Հայաստանէն ետքը: Մարգարէին կարծեցեալ փոխանորդը — որ անզօր գտնուած էր անգլուե-

գիպտական բանակին յաղթական ընթացքը կասեցնելու Սուգան — իսլամութեան հանդէպ իր խալիֆայական պարտքը կատարած կ'ուզէր անշուշտ երևալ՝ Մահդիի այդ «պիղծ» հոգեառին քանի մը կաթիլ արիւնը գոնէ խմելուն:

«Կատարած իրողութիւններու» տեսութեան քանի մը ջրողակ փորձերը ենթադրել տւած էին Երլազի մենակեացին թէ «աննող-փախչող»-ի սխտէմը քաղաքական իմաստութեան սկիզբն էր: Իսկ արևելեան և մանաւանդ հայկական խնդրին վերջին տաղանակներէն իր անվնաս պրծնիլը քաղաքական մեծ ձարկութեան մը վերագրելով, Համիդ ու իր խորհրդականները վերջ ի վերջոյ իրենք ալ հաւատացին թէ իրաւ իրենցմէ խելօք մարդ չկար աշխարհիս վրան: Այդ մօլի ինքնավար տահուութիւնն էր որ Երլազի համար ապահովագրէս ամէնէն անբաղաքագէտ, իսկ Թիւրքիոյ տառապող ժողովուրդներուն համար ամէնէն նպաստաւոր դէպքերէն մէկը թելադրել տւաւ Համիդին:

Բարեբախտութիւն մըն էր որ անգլիացի զինուորներ ալ սպաննուեցան: Եւ ծովակալ Նոյէլի կորուկ ու խիստ ընթացքը, 5,000 անգլիացի զինուորներու խմբումը Կանդիոյ մէջ նորանոր գունդերու հետզհետէ ժամանումը երկիւղ տւաւ Եւրոպային թէ մի գուցէ Անգլիան փորձէ այն կերպով խաղաղեցնել Արէտէն, ինչպէս Ալէքսանդրիան ու Եգիպտոսը: Չգաց Եւրոպան թէ ինչ ազետայի հետևանքներու կրնար յանգիլ իր հեղք ու յեղյոյնով ընթացքը ամբողջ արևելեան խնդրին մէջ. ընթացք մը որ կրնայ տանիլ միջազգային այն ծանր բարդութիւններուն, որը կանխելու համար իսկ կազմուած էր Եւրոպական տխրահամբաւ ներդաշնակութիւնը: Եւ չորս մեծ պետութիւնները փութացին հոկտեմբեր 5-ին վերջնագիր մը ուղղելու Բ. Դոան, պահանջելով օսմանեան զօրագունդերը քաշել հանել Արէտէն մէկ ամսան միջոցին: Եւ այս անգամ կատակ չէ ըսածնին:

Դառն յուսախաբուութիւն մը Համիդին համար... Իրաւ որ բարի Ոգի մը կայ կարծես, որ յանկարծ կ'երևի նարկիլէին ծուխին մէջ. կը շոյէ թիւրքին բնազդները, կը գրգռէ և... յանկարծ կը գթէ «կորստեան անդունդին» խորը, ուր հետզհետէ զնացին քաջախելու այդ Հիւանդ Մարդուն թխած անդամները:

\* \* \*

Արէտէի այդ պատահարները պիտի փութացնեն անշուշտ կրէտական խնդրին լուծումը, որ ապահովաբար իր կարգին առաջ պիտի քաշէ կամ, թերեւս աւելի ծիշդ լինէր ըսել տեղ պիտի բանայ մեր դատին, որովհետեւ այդ երկու քոյր-խնդիրները իրենց փոխնիփոխ բայց աններդաշնակ բռնկումներով փոխադարձաբար խոչընդոտ եղած են ցարդ իրարու: Առաջնիկային առիթ կ'ունենանք խօսելու այդ մասին: Առաջինք մեր ընթերցողներուն ուշը հրաւիրել այս անգամ կարգ մը խորհրդածութիւններու վրայ, որոնք անողոք տրամաբանութեամբ մը կը հետեւին Վանդիոյ վերջին դէպքերու գննութեանէն:

Մինչև վերջերս տակաւին՝ աղաներէ, վախկոտներէ, իմաստակներէ և դաւաճաններէ բաղկացած խումբ մը կոկորդը կը պատուէր պոռալով՝ թէ Հայ յեղափոխութիւնն էր եղած պատճառը Հայկական խնդրին կրած ձախողանքին և Հայութիւնը ծայրատող Սարսափներուն: Երբ առաջին օրերու խուճապէն ետք առողջ դատողութիւնն եկաւ դէպքերն իրենց բուն արժէքին մէջ կըշռելու և պատասխանատուութիւնները ճշդելու, այդ վճճմակը իրաւ է որ ձայնը կտրեց քիչ մը, բայց նոր երգ մը սկսաւ. զի ն ա դ ու Լ Ը. «Հաշտութիւնը, կ'ըսեն, Համիդին հետ, չէք տեսներ որ ինքը նախաձեռնակ է եղեր Հաշտարար քաղաքականութեան մը»:

Վանդիոյ վերջին սարսափները չեն ուշանար փարատել ու ցրելու այդ թունալից պատրանքները, — որոնցմով կ'ուզէր Հայութիւնը թմրեցնել — և թանկագին օժանդակութիւն մը կը բերեն մեր խնդրին իրական կացութիւնը պարզելու:

Համեմատելով պահ մը այդ երկու երկիրները — Հայաստանն ու Արէտէն — ու տեսնելով թէ որն աւելի շանս ու երաշխիք ունէր նոր ջարդէ մը զերծ մնալու և բռնելու հաշտութեան համար Համիդին կարկառած ձեռքը:

Յիշելու է նախ որ Արէտէն աւանդ կը նկատուի այսօր մեծ պետութիւններուն քով, մինչև կրէտական խնդրին վերջնական կարգաւորումը — բան մը որ պաշտօնապէս ընդունած է Համիդը տակաւին յոյն-տաճկական պատերազմին ատեն: Իրեն շատ լաւ յայտնի են նաև ծովակալներուն տրամադրութիւնը. դեռ նոր էր որ Բ. Գուռը կտրուկ մերժում ստացաւ անոնցմէ, երբ կ'ուզէր նոր զօրք խրկել Արէտէ, կղզիին հին զօրքը արձակելու պատրուակին տակ:

Ահա երկիր մը, ուր 70,000 մահմէդականի քով 270,000 կրէտացի կայ, ուր ապստամբներու բազմութիւն ու մարզած զօրագնդերը հրացանը ձեռքերնին կրսպասեն չէզոք շրջանէն անդին, ակոսանին կրճտելով օսմանցիներուն վրան: Եւ վերջապէս Արէտէի առջև խարսխած են մեծ պետութիւններուն զօրհաւորները, ամէն րօպէ պատրաստ իրենց թնդանօթներու բերնէն ջարդ ու աւեր սփռելու կղզիին վրայ...

Տակաւին շատ ալ չէ անցած այն օրէն, երբ Համիդ սիրալիր ընդունելութիւն մը կ'ընէր յունական նախկին նախարարապետին՝ Ռալիին, իր ձեռքով անոր կուրծքը կը զարդարէր օսմանիէ ականակուռ պատանշանով մը, ու եղումեղորով շողախած խօսքերով նաւակատիքը կ'ուզէր ընել յոյն-տաճկական նիդակակցութեան մը, հիմնած հաշտութեան ու փոխադարձ զիջումներու վրայ...

Արքան փափուկ էր արդարև Թիւրքիոյ կացութիւնը կրէտական խնդրին այս նոր փուլին մէջ, և որքան շրջահայեաց պէտք էր գտնուել Երլուզի քաղաքականութիւնը: Համիդին վեհապետական շահերն իսկ վճռաբար կը պահանջէին առժամաբար, առերեսս գոնէ նախանձախնդիր հանդիսանալ արդարութեան ու կարգուկանոնի պահպանումին. թերեւ Երուսաղէմի Ռեստաւորը օգնութեան հասնէր Մէքքէի Հաճիին, ձգձգելու կղզիին գործերուն տարտամ վիճակը... լաւագոյն, մենք ըսենք դժոխագոյն օրերու յոյսով...

Տեսանք թէ ինչպէս շարժեցաւ Համիդը: Իսկ ինչ ունի մեր հայրենիքը Արէտէի վայելած նըպաստաւոր պայմաններուն, հանդիսաւոր հաւաստիքներուն և զինեալ պահպանումին հանդէպ:

Հայկական խնդիրը չունի հիմա կրէտականին այժմեութիւնը: Հայաստանը հայերու կուռ և թւով գերակշիռ բնակչութիւն մը չունի ոչ-հայ տարրին հանդէպ, Արէտէի պէս սահմանափակ տարածութեան մը վրայ: Հայաստանը տակաւին ապստամբ չէ բառին այն իմաստով որ կարելի է գործածել Արէտէի նկատմամբ: Հայաստանի հողին վրայ բանակ զարկած չէ եւրօպական զբաւոյն բանակ մը: Միւս կողմէն՝ քաջ դիտէ Համիդ որ վրէժը բովանդակ հայութեան մեծ տնջանքն է այսօր, և իր գարշելի Լ ու Տ ը թ օ թ Ե Լ Ը անոր սևեռուն գաղափարը:

Վանդիոյ սարսափներուն արիւնի ցօլքերուն տակ ահուելի մերկութեամբ կը պարզուի այսօր այն մեծ պարսպը, այն ամուլ գործունէութիւնը որ Օրմանեանի պատրիարքութեան փառքը կ'ուզէին հոգակել գառներու դէմ գայլի արդարութիւնը փնտռողները:

Ի՛նչ կորանքներ յանձն չառաւ Հայոց պատրիարքարանը. որը պակաս թողոց, հանդիսաւոր մաղթանքներ հայ եկեղեցիին մէջ, ստոր շողքորթութիւններ, ստրկիչ շնթանքներ, բան մը օգուտ չըրաւ: Համիդը գովեց Օրմանեանին ընթացքը ու խոստացաւ, և կը շարունակէ դարձեալ խոստանալ, նորէն խոստանալ... Բայց երբ Օրմանեան թողաւութիւն կը խնդրէ հանգանակութիւն բանալ մեր հազարաւոր որբերուն համար, Համիդը երևան կուգայ իր բոլոր շնական լրբութեամբ. ճիւղալային հեղուկութեամբ մը Պօլսի Հիւանդանոցին ապուշներուն հացն ու միսը կը հրամայէ աւելցնել տալ, իսկ Հայաստանի մատաղ սերունդը կը դատապարտէ անօթի և ցրտահար մարելու իրենց մորթոտած ծնողքներուն դիակներուն քով...

Պատրիարքին քանիցս հանդիսաւոր խոստում տրւած էր թէ պիտի դադրէին հալածանքները և անմեղներուն այլևս տուժել չպիտի տրւէին յեղափոխականներուն գործած յանցանքները (?): Ի՞նչ մեկնութիւն տանք ուրեմն Խլաթի դէպքերուն, որոնք — իրենց նորանոր յայտնուող պարագաներուն մէջ — ԾԵ-ի արհաւիրից օրերը կը յիշեցնեն: Քանի մը օր առաջ ալ հեռագիրը գուժեց Վանի մօտ տեղի ունեցած արիւնահեղ ընդհարում մը քիւրդերու և հայերու միջև. աս ալ պատասխան մը չէ՞ գաղթականներու վերադարձին: Վայսերական յրաբե-ինամ՝ կառավարութիւնը պիտի փութայ հարկաւ չքմեղելու. քիւրդերն էին, ի՞նչ ընեն. բայց ո՞վ կը հաւտայ հիմա այդ առասպելներուն. Խանասօրի կուէն՝ ետք կ'ուզեն ապացուցանել մեզ թէ հոգի բանակներ շարժելու պէտք կայ այդ վախկոտ աւազակները սմբեցնելու համար:

Համիդին ուղեղը — զգայաթափ լիկած հարէմական հեշտանքներու, արիւնի գոլորշիներու և կրօնամոլութեան նօպաներու մէջ — այդ ուղեղը չպիտի սթափի երբեք ըմբռնելու իր կատարած ահարկու ոճիրները: մարդկութեան դէմ, և իր իսկ երկրին պատճառած մահացու վերքերը: Վանդիոյ դէպքերը նոր թէ՛ և աւելորդ դաս մը բերին. վերջին ծայր տխմարութիւն է ալ սպասել որ Համիդը ան կ'եղծ օր էն հաշտարար քաղաքականութեան մը յանգի, ցորչափ նեղը չդնեն զինքը հայ յեղափոխական շարժումի մը առաջ բերելիք բարդութիւնները, եւրօպական ստիպեալ և իրական միջամտութեան մը հետ զուգընթացօրէն:

Հիմա երբ մեր կացութիւնը ճշդելէն ետք, պահ մը կը փորձենք աչքերնուս առջև պատկերացնել այն ամբողջը, որ կ'ըմբռնենք ապագային յեղափոխական Գործը բառին տակ, գործունէութեան Ծրագիրը մը, որ այսօր բովանդակ տառապող հայութիւնը բնագոյրաբար կամ գիտակցօրէն կը թելադրէ մեզ, և որուն ամէն մէկ մասը պիտի իրագործուի քայլ առ քայլ, անյողողօղ կամքով մը — երբ ակնարկ մը կը նետենք այդ ծրագրին վրայ, կ'ըսենք, դադարի կամ զինադուլի մասին խորհիլն ու խօսիլը եթէ դաւաճանութիւն չմկրտէինք, գոնէ մտքի տկարութեան նշան մը պէտք էր համարիլ:

Բայց մեր գործօն երիտասարդութիւնը շատոնց արգէն հրատարած է դիւրինին տիրանալու տենչէն, իրականն ու հաստատունը ձեռք բերելու համար, որովհետեւ գիտակցութիւնն ունի մեր դատին իրական կացութեանը: Եւ երբ կը տեսնէ թէ ինչպէս պետութիւնները տարիներու աշխատանք կը նկատեն իրենց երկրին վերածնութեան կամ իրենց ազգային պաշտպանութիւնը կազմակերպելու գործը, գիտէ ինքն ալ որ անընդհատ, յամառ ու երկար աշխատանք մը կը մնայ տակաւին՝ արդէն շատօնց սկսուած այդ Գործը գլուխ հանելու — գործ մը, որուն հիմ-

ըր նոր սերունդն իր ոսկորներէն շինեց և որուն շաղխը իր արիւնովը պատրաստեց:

Ատեն մը մեր նախորդ սերունդը կը դատապարտէինք, որ չէր կրցած լրջութեամբ ըմբռնել ու խղճմտօրէն կատարել մեր վերածնութեան գործին իրեն պատկանած բաժինը: Մենք ուրեմն, նոր սերնդի մարդիկս, սորվինք գիտակցաբար և պաղարիւնով ընդունիլ մեզ վիճակած բեռը, որքան ծանր լինի ատ: Մեր աջողութեան գրաւականը այն դրական խելքն է, այն սառն կորովը և այն անհուն անձնւիրութիւնը, որ հայ ցեղը այնքան հզօր կերպով ցոյց տաւ գերադոյն ոգորումի այս օրերուն մէջ:

Հօրիզօնը բացելու վրայ է արդէն. հնչուէրը առած է Համիդը. Խարթումի մեծադորդ անկուժը իջեցուց իսլամ աշխարհին, ամբարտաւանութեան փուքսերը, իսկ կրէտէի փրկութիւնը մօտալուտ է...

Պատրաստ կենանք մեր պատնէշներուն վրայ, որ դէպքերը յանկարծակիի չբերեն մեզ:

Թող պոռան որքան կ'ուզեն յիշնագու՛լ... հաշտութիւն... անոնք, որ դեռ պայքար չմտած յողանած են արդէն. հայ ժողովուրդին այլասեռած տարրերն են անոնք, դատապարտած անհետ կորուելու:

Իսկ մենք առաջ, անակնկալէն աւելի մեր խելքին ու բազուկներուն վստահինք, և չմոռնանք աջողութեան էական պայման մը — դիտիպլինը մեզմէ ամէն մէկին և ապա գործին մէջ:

Ապագան մերն է այն ատեն, և այն ատեն մենք գիտենք մեր ըսելիքը Երլարդին:

Ն Ա Մ Ա Կ

Ռ Ո Ւ Ս - Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Է Ն

ԽԼԱՍՈՒ ՍՍՐՍԱՓՈՆԵՐԸ

3/15 սեպտեմբեր 98.

Մինչ մէկ կողմէն խուժախուժք կը վերադառնան երկիր նախկին կոտորածներէն փախչողները, միւս կողմէն նոր փախստականներ հալածանքներէ կը ձգեն Ռուսիա կապաստանին: Անգուլ երթուղարձ մը: Մայիս և յունիս ամիսներուն մէջ 100-200 հոգի գացած են Ռուսաստան և դեռ շարունակ կուգան մանաւանդ Խլաթի և Բաղէշի գաւառներէն: Ասոնց պատմութիւնը — որը ըստորև կը հաղորդենք համառօտիւ — սարսուռ և արհաւիրք կ'ազդէ մարդուն վրայ:

Չմոռնանք ըսել թէ թիւրք կառավարութիւնը ամէն միջոց ձեռք առած է սահմանը փախստականներուն առջև գօցելու համար: Համիդականներ և զօրքեր խիստ կերպով կը հսկեն սահմանագլխին վրայ և մարդ չեն թողուր որ անցնի: Պատահածը կը չարչարեն կամ կը կոտորեն. ինչպէս մայիսի վերջերը սպաննած են բուլաւըրիցի 4 կին և 8 այր: Աւելորդ է ըսել թէ թիւրք կառավարութիւնը միշտ բերանը կը սրբէ, և միշտ պա-

տրւակներ կը ստեղծէ ինքզինքն արդար հանելու համար — այդ պետութիւնը չարութիւններ ստեղծելու, քան դելու հանձարը ունի գոնէ, եթէ ոչ շինելու:

Այդ կարգի պատրւակներէն մէկն եղաւ մօտերս Աղբիւրը և իր խումբը փնտռելու ու ձերբակալելու փորձը: Չմեւընէ արդէն կառավարութիւնը և քիւրդերը խլաթի ժողովուրդը կը նեղէին և կը պահանջէին որ Աղբիւրը իրենց յանձնուի. բայց և այնպէս շատ չէին առաջ քայլեր, ոչ ալ կը կոտորէին կամ կը թաշնէին: Գարնան սկզբէն իվեր սկսեցին են սաստիկ հարստահարել: Արջապէս մայիսին կանոնաւոր զօրքի հարիւրապետ Ալի պէյը (Խօշկայ չէրքէզ Սուլթան պէյի եղբայրը) հետն առնելով 50 տաճիկ զօրք Բաղէշէն ճամբայ կ'իյնայ Բաղէշի և խլաթի լեռներուն, ձորերուն ու գիւղօրէններուն մէջ Աղբիւրը փնտռելու ու բռնելու համար: Ծանապարհին յիշեալ հարիւրապետը կը հաւաքէ 100-150 համրականներ ևս, որոնք են Վիցնոյ Մուսայ պէյը 50 հոգով. Զիրոյ Միրզա պէյի տղերքը 50 հոգով. Բզօնցի Քամաշէնը 20-30 ձիաւորով և Ծախք Զորքի Զարքազ աղան 20-30 ձիաւորով:

Ամբողջ խումբը գիւղէ գիւղ ժուռ կուգար և որ գիւղ որ մտնէր քանի մը օր կը մնար: Ալի պէյը իր հանգստութեան ճամբան լաւ գտած էր. Գատաւն, Զրհօր, Շամիրամ, Արտափ, հախէ, Ծաւտ, Պօռ, Կամախ, Փափշէն, Մզօք և այլն գիւղերը այց տալէն ետքը կ'անցնի խլաթու գաւառի գիւղերը Ծորկօր, Կծաք, Ծղաք, Հաղաղ, Կամօրը, Կոշտիան. Սոխօրդ (Աղբիւրի գիւղը), Անք, Փրխուս, Մեծք, Տապալանք, Ռեզաթ և բոլոր մնացած սարի 10-20 գիւղերը:

Այդ պաշտօնական աւազակախումբը խուղարկութեան պատրուակի տակ ոչ մէկ լրբութիւն ինայած է. տանջանք, թալան և բռնաբարութիւն: Խեղճ գիւղացիներէն կը պահանջէին որ ցոյց տան Աղբիւրի տեղը, հակառակ պարագային ամէն չարագործութիւն պիտի ընէին: Որ գիւղ որ մտնէին թէ գիշերով, թէ ցերեկով, հրացանաձգութիւններով կը մտնէին, (տաճիկ զինուորները միշտ քաջ են երբ գիւղի մէջ են, լեռներու մէջ է որ գլխու պտոյտ կ'ունենան): Գիւղը մտածնուն մեծերը, ուսները մէ ճ լի սի կը հրաւիրէին. իսկ քիւրդերուն ու զօրքերուն տէստօւր էր թաշնել և ուզած բարբարօսութիւններ ընել:

Քիւրդերը իրենց հետ բերած էին կարգ մը անդէն քիւրդեր ալ որոնք համրականներու թալանները իրենց գիւղերը փոխադրելու պաշտօնը ունէին: Նորին Մարդասպան Աբահառութեան զօրքերը, տաճիկ և քիւրդ, նախօրօք կ'իմացնէին թալանակիր քիւրդերուն որ գիւղը երթանին, որպէս զի աւարը տեղ հասցնելէն ետք իսկոյն հասնէին յաջորդ գիւղին կողպուտը կրելու համար:

Երբ այդ երկուսնէ գազանները գիւղ մը հասնէին, աւազակ գործերնին կը լինէր կանչել գիւղին մեծերը և պահանջել որ Աղբիւրը ողջօղջ բռնեն և իրենց ձեռքը յանձնեն կամ տեղը ցցնեն: Բայց ապահով եղիք որ եթէ տեղն ալ իմաց տրուի, քանի մը քիւրդեր հեռուէն պիտի անցնին, որովհետեւ եթէ Աղբիւրի շոշորթը տեսնեն շան պէս կը դողան:

Աղբիւրը մարդու չըսեր ուր գտնուիլը, այնպէս որ անօգուտ է զան հետապնդելը: Բայց Ալի պէյի քաջարի խումբը՝ որ իհարկէ ուրիշ նպատակ ունի սարսափահար և դժբախտ ժողովուրդի մը մէջ թրքական

փէշը ար ֆնէր ընելով, սուրերնին շերցնելով, հայերուն բերնի չօր հացը հարամ ընելու համար, անհասարին տանջանքներու ու հալածանքներու կ'ենթարկէին զանոնք: Անոնք որոնք Աղբիւրի տեղը չգիտնալու դժբախտութիւնը ունէին վայ եկեր էր վրանուն. կը ծեծէին, կը փետէին ու գլխունուն վրայ կարմրցուցած թաս կը դնէին. ոտընին ալ փայտէ մէն կէն էն երու մէջ կը ձգմէին. ատոնցմէ շատերը մեռած են: Ահուաներ կոտորելը, գլուխ ջարդելը և ուրիշ անլուր չարչարանքներ հաշիւ չունին. կ'ինքը լլկելէ ետք նոյն տանջանքներուն կ'ենթարկէին. իսկ իբր չարչարանքի նորագիւտ նրբութիւն հայ կ'ինքը վարտիքներուն մէջ կատուներ կը ձգէին, ետքը ամէն կողմէն կապած, կը կատողցնէին կատուն որ ճարահատ կը ճանկուտէր և կը պատուէր դժբախտ կ'ինքը մարմինն ու աղիքները: Կասկածելի մարդիկները կախաղան կը հանէին. բայց հէնց որ խեղդւելու մօտ էին, փաթ, վար կը ձգէին, երբ ուշքի կուգար կըսկսէին կրկին ու կրկին հարցաքննել և այսպէս մահը ու տանջանքը անիւի պէս կը դառնային: Գեղեցիկ կ'ինքը ու աղջիկները հետերնին կը տանէին, և քանի մը օր իրենց գազանութիւններուն յագեցում տալէ ետք, բաց կը ձգէին: Շատ մը կ'ինքը մեռած են վախէ և տանջանքէ: Իսկ գիւղերու բոլոր ապրանքները գողցած:

Տանջանքներէ ստիպած հինգ հայ համաձայնած էին ցոյց տալ Աղբիւրին բարեկամները և անոնք որոնք երբ ևիցէ Աղբիւրին օգներ ու կերակրեր են: Այդ մատնածներէն անոնք որոնք չէին կրցած փախչիլ չարչար սպանւած են: Ամէն գիւղ իր սպանւածներու թիւը ունի: Ձեռք անցած քահանաներուն մօրուքները քերթելէ ետք մէկ քանին ալ սպանւած են:

Երբ այդ դժոխային խումբը հայ գիւղերուն մօտեցած է, բնակիչները մեծ ու պղտիկ, լեղապատառ ամէն բան թողած Բուլանըսի, Մշոյ դաշտի կողմերը փախած կամ նրկուցներու մէջ պահուած են. ոմանք ալ բարեկամ քիւրդերու մօտ ապաստանած են: Այդ թշուառներէն մէկ քանին հազարումէկ դժբախտութիւններով շունչերնին մինչև Ռուսաստանի սահմանը առած են. իսկ չկրցող փախչողները կրած են այն դառն ու դժնդակ ճակատագիրը որ թիւրքերու աշխարհին յատուկ է: Երկու գաւառս այդ կերպով ամայացած են, բացի երեխաներէն ու ծերերէն: Այրենի Ալի պէյի մարդիկը լեռներէն երբ դաշտերուն մէջ մարդիկ տեսնէին քէյֆի համար հեռուէն նշան կ'առնէին ու կը զարնէին:

Աղբիւրին գիւղը Սոխօրդ մանաւանդ բոլորովին աւերած են: Այդ գիւղին մէջ մարդ չէ մնացած, ամէնքն ալ ցիրուցան եղած են. ունեցածնին ալ կողպուած: Աղբիւրի և իր բարեկամներու տունները այրած են:

Այս ամէն չարագործութիւններէն և ոճիրներէն ետք ամէն գիւղէ 5-10 հոգի բռնած, մարդ և կին, ու Բաղէշու բանալը խրկած են. այնպէս որ բանտարկեալներու թիւը քանի մը հարիւր կը հասնի. . .

Ահա Բաղէշի հայ գիւղերուն մէջ իրերու ներկայ վիճակը. խեղճ ժողովուրդին ոչ կերածը վար կ'երթայ, ոչ խմածը. գիշերը քուն չունի, ցերեկը սարսափով սմբած:

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

ԸՆԴՀԱՐՈՒՄ ՄԷ ՊԱՐՍԿԱԹՈՒՐԱ ՍԱՀՄԱՆԱԴՂՈՒՄՆ ՄՕՏ

23/5 հոկտ. 98

Վը յիշէք որ Ելլաթի սարսափներուն գոյութիւնը պատրիարքարանը յիշեցուցած էր Երլարդին, որ արմացեր-զարմացեր էր լսելով այդպիսի անօրինութիւններու գործելը փատիշահին արդարադատ շուքին տակ: Այս անգամ փոխեցաւ դերը: Շաբաթ մը առաջ էր երբ պատրիարքը ստիպողական կերպով կանչեցաւ Երլարդը: Իրարանցում մը ինկեր էր հոն. հեռագիրը լուր բերած էր թէ Թիւրք-պարսկական սահմանագլխին մօտ, Բայազէտի գաւառակին Թուրքի գիւղին քով արիւնահեղ ընդհարում մը տեղի ունեցեր էր զինւած հայերու և քիւրդերու միջև: Պալատին առաջին քարտուղարը արդար (!) զայրոյթով բացատրութիւն կը պահանջէր պատրիարքէն. «այսերախտ» հայերուն այդ նոր զլխացաւանքին առթիւ: Իր պատմելուն նայելով՝ քառասունի մօտ զինւած հայեր, ամէնքն ալ հեծեալ ասպատակեր ու աւերեր են Թուրքի և ուրիշ գիւղեր և բաւական թւով ալ քիւրդ ջարդեր են: Քարտուղարը չէր մոռցած աւելցնել թէ շնորհիւ սուլթանին շարագործներու խումբը ցրած է արդէն և քանի մը հոգի ալ դերի բռնւած:

Ինչ կրնար պատասխանել պատրիարքը դէպքի մը մասին, որ իսպառ անծանօթ էր իրեն: Բայց Երլարդը քառորդ դար մըն է որ արդէն դասեր կուտայ. պատրիարքին կը մնար բանալ «աւուր պատշաճիին» տոպրակը. այդպէս ալ ըրեր է: Հայ խողովարարներ չեն ատնք, կ'ըսէ Օրմանեան, այլ հաւանօրէն պարսկահպատակ քիւրդեր են, որոնք ամէն տարի կ'ասպատակեն սահմանակից գաւառները:

Երլարդի պղտոր աղբիւրէն եկած այդ պատմածքին մէջ միակ ստոյգ կէտը առայժմ ան է, որ ընդհարում մը, և բաւական ծանր, տեղի ունեցեր է հայերուն և քիւրդերուն միջև:

Բայց այդ կուրը մեր կարծիքով ինչքան ալ ապանութեան դէպք մը պէտք է նկատել:

Թուրքի գիւղը սահմանագլխէն երեք օր հեռու կը գտնուի, ուստի հաւանական չէ որ քառասուն հոգիէ բաղկացած խումբ մը, շարժումներու յեռակէտէ մը այդքան հեռու վայրի մը մէջ — ուր այնքան զօրաւոր է թշնամին — նախայարձակ լինելու անխոհմտութիւնն ունենար: Չենք ուզեր ծանրանալ նաև այն կէտին վերան ալ թէ այդպիսի ուժերով ասպատակութեան մեկուսի դէպքեր որքան կը համապատասխանեն յեղափոխական կազմակերպութեան արդի ծրագրին: Ընդունելով թէ ստիպեալ ինչքան ալ ապանութեան դէպք մըն է ատ, հաստատապէս կարելի է ենթադրել թէ դիմադրող հայերը եղած են կամ վերադարձող գաղթականները և կամ գաղտնի ճամբորդող յեղափոխական խումբ մը:

Պէտք է կարծել որ ընդդիմադրութիւնը բաւական զօրեղ եղած լինելու է, որ այդքան յուզում պատճառներ է Երլարդին մէջ: Շուտով կ'իմանանք:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Է Ն

22/3 օգոստոս 98

Նախորդ նամակով հաղորդած էինք արդէն թէ եղբայրադաւ իժեր սկսած են նորէն ծայր տալ քաղաքիս մէջ: Գաւառաններու խումբ մը կազմած է — որոնցմէ մէկ քանին յեղափոխական դիմակի ներքև Թաքնւել կը փորձեն — նախագահութեամբ միականի ՉԱՐՈՒՆ-ՉԵԱՆ ԱՐԲԱՀԱՄԻ, որ արդէն մէկ-երկու տարի առաջ վարձատրւած էր Մարդասպանին շքանշանովը: Այդ գաւառան խումբին նպատակն է յեղափոխական շարժումը կանգնեցնել Վասպուրականի մէջ բնակչին ընդդէմ յեղափոխական կուսակցութիւնը: Հիմա այդ գաւառանները ջանադիր են դտնել ու ձերբակալել տալ յեղափոխական գործիչները կամ կ'օմիտեն ներս անդամները այն միամիտ վստահութեամբ թէ անկէ ետքը գործերնին կը դիւրանայ:

Այդ մատնիչներու խումբը քանի մը տասնեակներէ կը բաղկանայ և ամէնքն ալ թռչակ կըստանան կառավարութիւնէն. արդէն ոստիկան-զինուոր գրւած են, և շուտով պիտի ստանան պաշտօնական զգեստնին:

Գաւառան խումբը իր տրամագրութեան տակ ունի կանոնաւոր զօրքի դասակ մը, իր ուզածը ձերբակալել տալու կամ մասնանիշ շքած տեղը խուզարկել տալու համար: Միայն այս ամէն տասնէն տունը մէկը բանտարկել տւին:

Բաղէշի և Ելլաթի մօտերը կատարւած ահաբեկ խրժուրթութիւններու մասին գրած ենք արդէն համառօտիւ: Ահաբեկ ժողովուրդը սկսած է ասդին անդին փախչել տարագիր: Քանի մը եւրօպական հիւպատօսներ — որոնց մէջ նաև քաղաքիս անգլիականն ու ուսուսիտնը — մեկնած են արդէն քննութիւններ կատարելու տեղն ու տեղը: Վը վախցւի կոտորածէ: Մեծ երկիւղի մէջ են նաև քաղաքիս բնակիչները, որովհետև փորձառութեամբ գիտեն թէ Բաղէշ տեղի ունեցող դէպքերու հետևանքը անվերջ հոս կ'անդրադառնայ, ինչպէս այստեղիսն ալ հոն փոխադարձաբար:

Բաղէշի զինուորական հրամանատարը պաշտօնանկ եղած և Պօլիս դատի կանչւած է:

\* \*

12/24 օգոստոս 98

Քաղաքիս տագնապալի կացութիւնը մեզմացած է քիչ մը. բայց գաւառանները, այդ գառի զգեստով գայլերը, կը շարունակեն իրենց սխրագործութիւնները: Բարեբախտաբար կուսակալը խաղաղասէր մէկը կը թուի առայժմ, և թերևս այդ պատճառով մասնիչները երեսէ ինկած են: Ժողովուրդը կը յուսայ որ պաշտօնական մարմինները պիտի յաջողին չէզոքացնել այդ վատագիտները և մոքերը խաղաղեցնել: Տեսնենք:

Մուշէն օգոստոս 7 թւակիր նամակէ մը կը տեղեկանանք թէ Տարօնի ժողովուրդը վերջին աստիճան նեղ դրութեան մէջ կը գտնուի. սպրեւու միջոցներ կը պակսին. նպաստի բաշխումը դադրած է արդէն. հաց չի կայ...



### Մ Ե Ր Ն Յ Ա Ն Ա Բ Ա Ն Ը

(ՆԱՄԱԿ ԿԻՊՐՕՍԻՑ)

— 0 —

Եթէ կայ մի վեճ զգացում, որը իբրև Տիմոսկան սկզբունք իր նշանաբանն է դնում մի ընկերակցութիւնն ո՛ր և է սուրբ գործի համար, — դա անպայման ազնուութիւնն է: Ինչ խօսք, որ յեղափոխութիւնը բոլոր սուրբ կոչւած գործերից ամէնասուրբն է, ամէնանհրապարհանք. նա գաղափարական ձգտումների կատարելութիւնն է. նա ճնշւած ազգերի, հարածաւանների ազատութիւնն ձեռք բերելու համար ընտրած բոլոր միջոցների մէջ «սրբութիւն սրբոցն» է: Հետևաբար որպիսի ջինջ ազնուութիւն պէտք է փնտռել այն անձնաւորութիւնների մէջ, որոնք խմբւած են յեղափոխական գործի շուրջը:

Ո՛վ կարող է ուրանալ թէ ո՛ր և է ընկերակցութիւն, լինի նա բաղկացած 5 թէ 5,000 անդամներից, երբ իրեն հիմք ունի բարոյական այդ մեծ ուժը, իր գոյութեան տեսակէտից ապահովւած է առմիշտ, քանի դեռ նպատակը մնում է նպատակ, ձգտումը՝ ձգտում քանի դեռ հասարակական պայմանները ժողովուրդի այս կամ այն մասի գոյութեան, բարեկեցութեան, ապագայի համար անհրաժեշտ են դարձնում այդպիսի մի ընկերակցութիւն, այդպիսի մի կազմակերպութիւն:

Միևնոյն ժամանակ ո՛վ չգիտէ, որ շատ դուրին է ընկերակցութիւններ կազմել, ծրագրեր — նոյն իսկ յաջող ծրագրեր — պատրաստել: Բայց այդ ընկերակցութիւնները յարատև անելու, ծրագրերի պահանջները գործադրելու համար անհրաժեշտ շխտակցութիւնը երբ պակասի, կամ երբ գործի մէջ ազնուութեան տեսակէտից կոմպրոմիսներ (չեղումներ) մուտք գործեն, նրանք, այդ ընկերակցութիւնները, դատապարտւած են կամ քայքայելու, և կամ եթէ շարունակեն էլ իրենց գոյութիւնը, այդ կը լինի մի գրութիւն, որը մենք սովոր ենք անւանել ինքնախաբէութիւն: Դա մի անբուժելի ցաւ է, որ կամաց կամաց առաջնորդում է որ և է կազմակերպութիւն դէպի կործանում: Այն օրից, երբ որ և է կազմակերպութեան մէջ քսութեան, չարախօսութեան, նախանձի նշաններ են յայտնուում, երբ նիւթականի ու բարոյականի նկատմամբ զեղծումներ են յայտնագործուում, ուրիշ խօսքով այն օրից, երբ այդ կազմակերպութեան մէջ զգալի կերպով նկատուում է անազնութիւնը իր բոլոր զազերի կողմերով, այլևս անվստահութիւնը բուն է դնում նրա անդամների մէջ, ամէն մէկը միևսի մէջ իր պակասութիւնն է փնտռում, ամէն մէկը իր փառքը ուրիշի անկման մէջն է որոնում, տեղի անտեղի կասկածներ են ծագում, կազմակերպութիւնը սկսում է տատանել և վերջապէս քայքայել: Այդ հիւանդութեան հետեւանքները բացարձակ նկատելի են ամէն մէկին, որ քիչ շատ մտածում է մեր յեղափոխական գործի աջողութեան և ապագայի մասին:

Այս այսպէս լինելուց յետոյ, միթէ կարելի է մոռանալ թէ ինչ հրաշք է կատարում ազնուութիւնը, որը փնտռել ամէն մի յեղափոխական անուն կող անձի մէջ ոչ միայն իւրաքանչիւր կազմակերպութեան բարոյական պարտքն է, այլև գործնականի տեսակէտից միակ անհրաժեշտ պայմանը:

Որ և է կազմակերպութեան կողմից իւրաքանչիւր գործիչի մէջ քաջութիւն, յանդգնութիւն, խելք փնտռելուց առաջ՝ ազնուութիւն փնտռելը միակ նշանաբանը պէտք է լինի: Անհատների մասնաւոր կեանքում ցոյց տւած շխտակցութիւնը, նրանց գաղափարականի մէջ ունեցած ազնիւ յատկութիւններն են, որոնք յեղափոխական գործի միմի հաստատուն օղակները ներկայանալով՝ ոչ միայն նրա հիմքը պարփակող ամուր շղթան են կազմում, այլ և որ գլխաւորն է, նրանք հաւաքաբար առած, մի բարոյական այնպիսի կուսն են հաստատում, որի վրայ գործելու ուժ վատնելը զրկանքներ կրել և մինչև իսկ կեանքի զոհողութիւն յանձն առնելը համակրանքով է ընդունում ամէն մի անհատ, որ գնահատել գիտէ ազնուութեան ուժը:

Հասարակութիւնը, որ լաւը, շխտակը ճանաչելու գործում հաւաքաբար երբեք չի սխալւիլ յեղափոխական գործի մէջ ևս գիտէ ընտրութիւն անել: Նրա խանդավառութիւնը դէպի ազնիւ գործը անսահման է, ինչպէս և անսահման է այն զայրոյթը, որ արդարացի կերպով արտայայտում է նա դէպի ամէն մի անարժան քայլ:

Մենք գնահատում ենք ամբողջ, հասարակութեան այդ մաքուր բնազդը, որ աւելի նկատելի է գործիչ անհատների ընտրութեան խնդրում: Այդ կէտում արդէն նրա վերաբերմունքը այնչափ մխիթարական է, որ մենք աւելին չէինք էլ կարող սպասել: Այդ բնազդը նրան թելադրում է, որ անհատներին արժանիքն է արժանաւոր համախմբում կազմողը. իսկ այդպիսի համախմբումը մի պատկանելի պատկեր է, որի հետ միանում են հասարակութեան ամէնամասն ձգտումները, նրա իդէալները, և որի հանդէպ ստոր նկատումները, ոտնձգութիւնները փոշիանում են: Դա մի բեմ է, ուր լոյսի և յոյսի թագաւորութիւնն է տիրապետում:

Խիստ, ամէնախիստ վերաբերմունք ընդունած լինելով գործիչների ընտրութեան գործում, լաւ հասկանալով որ միմիայն այդ եղանակով կազմակերպութիւնը թէպէտև դանդաղ, բայց միևնոյն ժամանակ անընդհատ աճման ու բարգաւաճման շաւղի մէջ է լինելու, և ազնուութիւնը նկատելով իբրև առաջին պայման, — ամէն մի յեղափոխական գործիչից այդ արժանիքը անպայման պահանջելով է, որ մենք կարող պիտի լինինք երկարակեաց լինել տանել մեր խաչը, մինչև որ մեր ձգտումները մարմին առնեն, իրականանան:

Մեր գործը «սրբութիւն սրբոցն» է. նրա պաշտօնեաները ազնիւների ազնւագոյնը պիտի լինին. ահա մեր նշանաբանը:

### Թ Ի Ի Ր Գ Ի Ո Ց Թ Ո Ի Ր Զ Ը

Ամէն բան լաւ է, կ'ըսեն, երբ վերջը քարի է: Առածներ կան գործ երբեք չի կարելի ընդհանրացնել քարուն, քարքար ընել «վերջը քարի է» ըսելով, մարդկային ամէնէն խոշոր էշութիւններէն է: «Արիւն թափեցէք որ ազատւեք»-ը դիւանագիտութեան առասպելական վարդապետութիւններէն մէկն է, որով թէ սուրին իրաւունքը արդար կը ճաննէ և թէ ազատութեան ճամբայ մը կը ցցնէ մարդկութեան փշրկաթնաբով ու տատաւներով ծածկւած. Աւետարանի պատկերին համեմատ, թէ նեղ ու փշոտ ճամբան արքայութեան համեմատ ապահով ճամբան է: Սպաննել, տուութաւ ընել ամբողջ ժողո-

վորդներ ու ընտանիքներ ու ետքը անոնց տղաքները որդեգրել կամ ողջ մնացողներուն բանի մը ստակ տալ եւ նստիւն որ զինքը հարստող ձեռքը լնէ շան մը պէս, դարուստալնէն անբարոյական երեսն է:

Կրէտէի սուրանիները ժամտալ չե՞ն տար մարդկային տիրող դասին ունայնատուութան վրայ, երբ պէտք է որ ժողովուրդ մը իր հացին իր շինն համպիտ ապրի, ինչու սպասել որ տղետ բնականութեան սուրբ այդ ժողովուրդին սիրտը մխիթ թշուառացնէ զան:

Դար մընէ որ Կրէտէն կը ծննդի. ու այդ կողմին դարու մը սերունդը արհեստի մէջ ծնած ու արիւնով ծծուած է: Աշխարհը զիտէր որ այդ ժողովուրդը դժբախտ է, կը տեսնէին, կը լսէին անոնց քաշածները: Միւս կողմէն եւրոպական ազգերը իրենց իրենց մէջ արդարութեան, մարդասիրութեան ու քաղաքակրթութեան անունով երկինք գետին կը գողացնէին. ու դեռ այսօր քանակները դարու արեւազալին ամբողջ քաղաքակրթութեան առաջնորդները տառապող մարդկութեան դրական ծառայութիւն մը չէ յաշուած ընել: Եւ մարդկային կեանքը ծովը ինկած մարդուն պէս օտին կը պլլի: Երբ կըրնք «ամէն բան լաւ է երբ վերջը բարի է», աւուր պատշաճօք վերջին մըն է. նկատելով իրենց ու ազգերու ներկայ վիճակը որմնով չենք կարող սպասել մարդասիրական զգացումներու անմոռական եւ տառական գործադրութիւնը, խորհնով թէ դեռ ժամանակ կայ ուր մարդը բարիք ընելու համար նախ անոնց չարքը ընելով փորձելու պէտքը չպիտի գտնուի, եւ մարդկային իրաւունքը ճանշալու համար անոր սուշտեղը էրելու, երկրը փութ ընելու «մուստա» զգացումը չպիտի ունենայ: Ուրիշ Կրէտէի համար կընայ պատշաճի վերի առածը, պայմանաւորքէն միայն եւ ոչ սկզբունքով: Ասայժմ, ստ ալ բան մըն է:

\* \* \*

Տարիէն պլլել է որ եւրոպական մարտականքը Կրէտէի կողմը ծուլծուլ կը կռուի. կողմին երկու ազգայնականութիւններն ամէն օր իրար կը բզկուէին, պաշտպանութիւնը ուզածմին կընէին եւ սովը կըսպանար աւել զան: Ժողովուրդները բացբարան հետուէն կը դիտէին միմայն, օր մըն ալ իրենց թուաթիւները բացին խեղճ ապստամբները ուղարկուելու համար: Այնպէս որ թիւրք չանշան թերթերը թեւ ատած սկսան խաւեփայի գերմարդկային կարողութիւնը փառաբանել, յայտարարելով թէ եւրոպական մեծ պետութիւնները հիմնադրվ զին. սուլթանին բարձր քաղաքակրթութեան եւ անոր... քաղաքակրթիչ դերին վրայ, մասնաւոր անոր սերտը շահելու համար, հազարամէկ բնիկներ կընէին, անոր դէմ ապստամբողները շարաշար կը պատժէին եւ այլն: Ու այդպէս ժամերը, ամիսները, օրերուն ու մուշկաց կ'անցնէին անբաստ կողմին վրայէն: Որքան ատեն թիւրքերը եւրոպացիներուն թիւին չէին դպիւր ուզածմին կընէին. թէ եւ այնքան քաներ զրեցան, քանակութիւններ կ'ուան, սուլթանը ակամշացուց ըրաւ ատոնք ամէն ալ, ըստ այն առածին թէ Ս ա տ կ ա ժ է շ ը գ ա յ լ է ն չ ի վ ա ի ն ա ր: Եւրոպական միաձայնութիւնը Կրէտէի ինստիտուցիոն մէջ սկսաւ արդէն կռուիլու եւ իրարմէ քէն ընել հարմիրի տունը սուգի տուն ընելով:

Սուլթանը Կրէտէն գտնութեան ինձորի մը պէս նետած էր եւրոպայի տարփածուններուն առջև եւ կը յուսար թէ արեւելեան հարցով շահագրգռող տէրութիւնները, Կրէտեով զբաղենով զրաւը իրեն առջև պիտի բանար յարիտմական ժամանակ մը, եւ թիւրքը ազատ պիտի շարժէր: Սակայն ըրաւ ըրաւ, զլուրը կերաւ դազի չամիդը:

«Պիտի ըլլայ» կըսէ Գատէրը եւ կոչաւ: Սեպտ. 3-ին երբ անգլիացի պաշտօնականներ, անգլիական զինուորներու հսկողութեան տակ, Կանդլոյ մէջ տասնորդները կը ժողովէին, թիւրք խուժան, պաշտպանութիւնն հետ: Խօսքովէ կը քրտնալին ստի մը անգլիացի գործին վրայ եւ անոնցմէ 50-ի շահ կըսպանեն, կը վերաւորեն: մասցածը հազիւսագ իրենց նախնը կ'ամանն շունչներին: Ետքը խուժանը կը կտորէ քրիստոնեաները եւ անոնց թողնելը կը թախէ ու կրակի կուսալ, — ատոնց փշտակներուն տակ հարիւրաւորներ զո՞ հողած են, — շունչալով նաև անգլիական փոխ-հիւսուսոսն ալ շարաշար սպաննել: Զինուոր թիւր 500-ի կը համար: Արիւնաբար ամբողջ, թիւրք իշխանութեան մեղսակցութեան, Հայաստանի կոմիտաններուն քաղաքատուութիւնը գործադրելով նոյն ինչ եւրոպական գործերու վրայ, կ'ուզէր ցննել թէ ինչ եւրոպացիներէն ալ փ է ր վ ա շունչը եւ թէ չէին հանդուրժիր որ կեամբները կալիֆային հողին վրայ ձեռնազուլութիւններ ընէին: Թիւրքերուն հոգեբանութիւնը բուրդովին տարբեր կ'ընում չինուած է, անելի աւազուտ: Նոյնիսկ Պարսիզի մէջ երբեք թիւրք, երբ իրար գան, անպատճառ

սուտ իբաւ մէյ մը իրարու պիտի ըսեն, ազգային բնորոշ գիծերէն մէկն է. «Պու կեամբուրաքը ըստէ՛լի, փարալարնը քարալարնը ալը վէրմէլի»: Կեամբուր չարգելու սոսկակն քնական հակում մը ունին: Օր մը, տաճիկ էֆէ մը երկան սուր մը կը սրէ, թիւրք պաշտօնեայ մը կը հարցնէ անոր. «Անմէ՛ղ, ատով քանի կեամբուր կըսպաննես»: — «Ալալահա պիտիտէն աշաղա իտալէ էթմէզ» կը պատասխանէ:

Սմբած ծովակալները թիւրքերու իշխատակէն հօք վեր ցատկեցին. անգլիական ծովակալը անմիջապէս ուղարկուեց Կանդիան ու աւերակ ըրաւ: Թիւրք իշխանութիւնները լեղապատառ իրար անցան եւ աշխատեցան կարգը վերահաստատել: Ծովակալը հրամայեց որ յանցարարները ձերբակալին ու իրեն յանձնին. շուտ շուտ կարգ մը անմեղ մարդիկ ձերբակալեցան ու յանձնեցան. ատանց բուն հեղինակները գտնել չամալու:

Անգլիացիք շտապով նոր զօրք ապապրեցին որոնց թիւը 5,000-ը կ'անցնի հիմա:

Նոյնիւր շատ ծանր կերպարանք անմեղ, եւ չուզելով անգլիական կառավարութեան պատրուակ մը տալ կողմին վրայ երաւունքներ քաննցնելու, ծովակալները պահանջեցին թիւրք խուժանին զինամասիւնութիւնը որ մասամբ զործադրեցաւ. իսկ չորս մեծ տէրութիւնները ատանց տնտեսաւ վերջապէր մը երկեցին սուլթանին որուն մէջ դիւանագիտական կտրուկ ու չոր ազդարարութիւնով մը կը պահանջէր որ թիւրք գործերը իսկոյն հեռացին. հակառակ պարագային բուն մեղսներու պիտի դիւմէ: Երկուրը դիւանագիտական միակական որոշման վրայ զենկրտաց, փախստի ծավթայ դեռ չէ գտած. այժ կամ չէ ըսելու իրաւունքը միմակ տրուած է իրեն: Ինչպէս զբզակ թէ ծանր պատասխանատուութիւն մը ունի. թէ եւ չամայ յանցարարը նետել եւրոպական դատարաններուն վրայ, որոնք արգիւնելով օսմանեան նոր զինուորներու մուտքը կողմին մէջ անկարգութիւնները ամենու պատճառ եղան:

Ղազի չամիդը, որոշ քաղաքական ուղղութիւն մը ունի, ուրիշ ընաւ չի շնորհ. երկրին օգտին համար չէ հնարել, այլ միայն զբօսանքի համար: Նսիս կ'լեցուցած է թէ իր ժողովուրդը լիբը եւ... վայրենի, որուն կառավարութեան թումը չի դիմանար. երբ կըզգայ թէ օտարէն նախատինք մը կամ ըսպանակեց մը պիտի գայ իրեն, նսիսապէս կը յայտարարէ. «Մի ընէք, ժողովուրդս կը վերաւորի, հետեւանքին պատասխանատու չիմ»: Անա այս աղտոտ եւ հարէմական քաղաքականութեամբ քալած է տարիներէ իվեր. եւրոպացիներէն կեքած նսիսատինքին վե՛ժօք քրիստոնեայ ղեջնիստ ուայա նեք ուն գլխուն թափելով: Զգնեց անցեալը. դեռ նոր երբ Կրէտէ թիւրք զօրք երկինք արգիւնեցաւ, «Զգեցէք եւ ուզած կերպով խաղաղեցնեմ» կըզին կ'ըսէր, վերջը ըլլալիցին պատասխանատու չեմ»: Նոյնպէս սեպտեմբեր 3-ին Աթարիֆի (Անգլիա) մէջ հայանպատ միջինի մը պիտի առի ունեւոր. օրեր առաջ սուլթանը Անգլիոյ դեսպանին կ'իմացնէ թէ այդ միջինից կարող է մահմէդական միտեանդութիւնը զրգուել հայերուն դէմ: Կրէտէի մէջ Երկուրը գնուակութիւնը եկաւ կուս, իսկ Քարտիֆի միջինիկն արհիւնը զու կըսպասներ: Անա սուլթան չամիդին Երկուրը գնումին մէջ ցննած վիճուկ քաղաքականութիւնը. ու անոր «էտէպիգ» թագաւորութեան պատկերը:

Կրէտէի դէպքը Արեւելքի մէջ Անգլիոյ արդէն ինկած պատիւին մահացաւ հարած մը կուտայ, եթէ Անգլիայ, որուն համբերութեան երկայն ու վճիռը կտրուկ է, եւ անարգում պատիւը չբարձրացնէ: Կրէտէն Անգլիոյ ազդու քաղաքականութեան հրաւէր մըն էր: Յուսակ է որ նմա Արեւելքը սուլթանին արհամարհանները կ'լսել: Ետքը, արտ գնդակներն ալ չի մարտի: Բաղձալի է որ անգլիական ուղեւորները արեւելեան հարցը չքստէին անցնէին, այլ մէջը երէին:

Կրէտէի հարցը եղ կը լեցնէ նորէն սրկուկան խնդրին վրայ. այս անգամ տէրութիւնները թատերաբեմին վրայ կ'իքնան աւելի քարկիտուած, սրբազրած տրամադրութիւններով ու ուժով քայլերով, համոզում թէ ալ զօգուով ատոնք չէ. եւ եթէ թող ատն սուլթան չամիդը ամբողջ քրիստոնեաներուն արհիւնը հում հում պիտի խմէ: Ուրիշն չորս պետութիւնները վճիռ են կալով չամիդին ակամշը, զնացնել զան, եւ, եթէ շատ յամարի, արհիւն փոքը քալեցնել չի՞ժ ցարը չոր ծննդ տող չի մը արհիւն հանէին անիւ, այսպէս արևուն ծովեր չէր կազմել. թիւրքը ծնծես նէ իսկըք զլուրը կուզայ. սա էր ամէնէն փորձառու մարդոց կարծիքը: Սուլթանը թող չպատրի — թիւրքերը պէտք ունին իրեն պէս կրնը ծիրակ փատիշահի մը — քիչ մը փիլակ, քիչ մըն ալ... լուսուս ուրէ ամէն բան կը մոռնայ: Անգուկը մոռցուկ:

Թիւրքիսն շատ քան մոռցած է, շատ ալ մոռնալու վրայ է ինչուլաւ: Զորս պիտուութիւնները հոկտ. 5-ին ունին Գոսն իրենց վերջնազրեք որուն մէջ յիշելով ք ա զ ա ք ա կ ր թ ու թ կ ա ր ու մ ա ղ ր դ

վուծեան անուշով միջամտութիւններն, եւ հաստատելով թէ թիւրք զմուտնորս ներկայութիւնը կղզիին մէջ խոտլութեան եւ անկարգութեան զլեւաւոր աղբիւր մըն է, կը շեշտեն հինգ կէտերուն վրայ: 1. Մինչեւ մէկ ամիս թիւրք զհնարները պէտք է հեռանան կղզիէն: 2. Իրուը վերջնագրին հաստատուն պատասխան տարու է մինչեւ ութը օր: 3. Մերժման կամ ձգձգման պահուն տեղութիւնները իրենց պիտի գործադրեն վճռու: 4. Տէրութիւնները իրենց պիտի ապահովեն միւսկեանները: 5. Սուլթանին զերհովանաւորութիւնը պիտի պահուի, ինչէն զհնարները յօտար կամքով դուրս ելլեն:

Իրուը սառնց լեզին տարու ընդունելու է կ'ըսէն: Կրէտէի քրիստոնեաներուն ուրախութիւնը սահման չունի: Կղզին տարեկան պզտիկ տուրք մը պիտի տայ սուլթանին. ինչպէս շաւրք բերանը ոսկոր մը կը նետեն որպէս զի չվնկեկայ:

\* \* \*

Թիւրքիոյ ամբողջութեան անյեղի սկզբունքը պարբերական նոր խզտում մըն ալ կը կրէ, հաստատելով տեղագրական կերպարանստիտութեան օրէնքին: Եւ ինչ որ կը խոտուցնէ մեզ սիրտը միւսկեաններու ձեռքէն կլած հող մը ալ եւս ետ չըսանալու սկզբունքն է: Իրան է որ թիւրք ղազինները ու թիւրք անուշ բերան թիւրքիւր դեռ կը հիանան իրենց փատիշահին զերջնական կարողութեան վրայ ու անոր հոտովը կը զինովան: Իրան է որ չամիտ իր երկիրը անկար պատմուածն մը կը կարծէ որ չի քակելու եւ որուն ամբողջութիւնը ապահոված է միջազգային յարաբերական անհամայնութեան պատճառով: Իրան է որ իրենց զագանութիւնները իրենց անպատու փառքը պիտի ըլլան: Թիւրքերուն մեծ մասը սատկին երթան մէյ մը կեանքը շարքելու հիւանդութիւնն վազ չպիտի գան, մէյ մըն ալ իրենց կոյր յաւակնոտութիւնն:

Տէրութիւնները իրաւ է ցարդ ձգպոցին Թիւրքիոյ ամբողջութեան, քայք քամ դրած էին զան. ձծեցին ձծեցին շորցուցին. երկրին զանձը դարտակ կը զայ, իսկ պաշտօնեաները անօթի կը զկրտան: Նոյնիսկ սուլթանին անձնական զանձը կը դարտակի Գերմանիոյ կայսեր ընդունելութեան համար: Ոչ վաճառականութիւն կայ, ոչ չէքշտուրք վարուցան կ'ըլլայ, ոչ ալ վարվատակ կայ: Երբ երկիր մը այդ օրին կը հասնի, միակ ծարձամբան յեղափոխութիւնն է: Անմէջ Ռիպաներ շեն իհարկէ որ այդ ծամբան պիտի պատրաստեն. այդ էֆէնտին, մինչեւ հիմա այն համոզումն ունի թէ թիւրքերը լքամիտ մարդիկ են, յեղափոխութիւնը թնծաւօրիկ ազգերուն յատուկ է, չտեսնում ընելով իրենց պատմութիւնը, արեան ու աւերակներու լայն յարողողի այն ծամբան որ կը զգուի, կ'երկնայ միջոցին ու ժամանակին մէջ...

Ժամանակ մը յոյն-թըքական դաշնակցութեան ծայր մը ելաւ. Ռիպան սուլթանին այդ նախածնունդութեան ամէնէն մեծ հիացողներէն եւ պաշտպաններէն եղած էր: Յոյն-թըքական միութիւն, ինչ իստէալ... քայք Կրէտէի վերջին ղէպքերը հիասթափ կ'ընեն դրական փիլիսոփան եւ լեղանքով մը կ'ըսէ թէ յոյները իրենց «հին իմաստութեան» ժառանգորդները չեն. ուրիշ կարիք է հետեցնել թէ օսմանցիները իրենց պապեանական քարքերուն ու թագաւորուն հաւատարիմ մասցած են: Ազնի չի գտնուր յարձակումը Կրէտէի անպաշտպան միւսկեաններուն վրայ, որոնք արդարութեան միայն օգնութիւն կը պատանեն. ննթաղելով որ թիւրքերը ներսեւի (esotérique) արդարութեան ըմբռնումը ունին իրենց համար. այդ արդարութիւնը չէ որ կըսուան Ռիպան: Ինչ որ ծիծաղուի է փիլիսոփայի մը քով անոր համարողային եւ անաչառ ինչպէս զուրկ ըլլան է: Անմէջ Ռիպան Կրէտէի վրայ եւ Մայի, իբր սուլթանի ստրուկ կղզիի մը վրայ ուր մահմէդական պարկէշ տարը իրաւունք ունի քրիստոնեայ տարը ձգմուր, ընչելու, հողերը սեփականելու. եւ թէ քրիստոնեաներուն կողմէ եղած ու եւ է դժգոհութիւն լքութեան ու աւազակութեան նշան է: Դժարը կուզայ երբ քրիստոնեաները անցած տարւան ապստամբութեան ատեն թիւրքերուն անպատ հողերէն մէյմէկ պատուտ հող կը խնն: «Թիւրքերը թէեւ փոքրամասնութիւն են կ'ըսէ, քայք քոյր հողերուն տէն էին» եւ աւազակութիւնը կը սեպէ այդ համապարտումը: Ինչու կը մոռնայ թէ թիւրքերն ալ ատենով նոյն հակընկերային միջոցով խլած են հողերը: Վանի խոտլութեան ատեն, թիւրքերը երբ հայերուն տուները կը թալանէին, զարմանքով կ'ըսէին. «Հայերը ինչ անհատում կահկարասի ունին»:

Թիւրքերը իրենց փշրածը կը դէլին. քայք Ռիպան կրնայ իմաստասիրութիւն ըսու. Je pense, donc... comme un turc.

\* \* \*

Իերման կայսեր Պօլիս այցը դարու անամթ եղկութիւն-

նրէն մէկը կը սեպի, մասնաւոր այս ձգնաժամին, երբ կրկնը եւեւմտապէս մասնաւորեան հասած է. սուլթանը աշխատած էր որ տէրութիւններուն վերջնագրեր, Վիեննայի, իր լուսաբար, Պօլիս զալէն ետքը տրէ. որպէս զի խնդրէր անկէ որ այդ «բան ըստակը» հետեցի իրմէ: Վիեննայի հիմնուց ձեռքերը լացած է այդ հարցին մէջ. քայք որովհետեւ բարբառական ու երեսպաշտ քայքերը անմեղիկ ցուցամու մըն է, զուցէ փորձէ. քար մը նետել համաձայնութիւնը լքողներու համար: Իր սղմուկ զինուորական շքեղ հաւաքը — կարծ օրը հինգ անգամ հագուտ կը փոխէ — արեւելցիներուն ցցնելու համար Երուսաղէմ պիտի երթայ: Փոքր-Ասիոյ քաղաքներուն մէջ իր ստղաարտը պիտի փայլեցնէ եւ պիտի խնդրէ սուլթանէն որ ... հայերը շարժէ զերմասնորուն տեղ ընելու համար: Գերմանական առասպելին մարդը կը յիշեցնէ քիչ մը, որ ամէն տեղ իր կորսնցուցած շուքը կը փնտռէ: Զրիստոս բացառաբար պիտի ըսէ այդ ուրուր բռնաւորին. «Աղքատներէն զողջիւր ու ետեւէս եկուր»: Վիեննայի անյագ պատրոյզին վրայ վառելով թիւրքիոյ եղը պիտի հասնի: Իսկ սուլթան չամիդ ասպրելու համար առասպելին աստուածին պէս իր զաւակները կ'ուտէ:

### Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ե

#### ՅԱԳԱՐ ԿԵՂՐ. ԿՕՖԻՏԷՆ ստացած է՝

Սուլիշ շրջ. 35 դահեկան. Զրվէժ շրջ. 27, Եփոթ շրջ. 10, Գեղշուկ շրջ. 10:

#### ՆԱԽԱՐԱՆԳՄՅՅ ԿՕՖԻՏԷՆ՝

Չորափորի Սիկիսա խ. 5 ուրբի, Լիվանս քաղաք խ. 15: Գուլար 20 ուրբի.

Գաղթապարի մասնաճիւղի մուտքը. — Մօսիկ գիւղի չաստա խ. 359 ուրբի, Լեռնապատ գիւղի Սէր խ. 70. 70, Զար գիւղի Առիժ խ. 150. 20, Եգեկիս գիւղի Կայծ խ. 28, Խորին գիւղի Հայրենիք խ. 38, Բլուր գիւղի Ազգասէր խ. 25, Կարմիր գիւղի Յոյս խ. 136, Նոյն գիւղի Կարապետ Կարապետան 100: Գուլար 904 ուրբի 90 կօպէկ:

Ապաստանի Ապառած գիւղէն. — Արև 6 ուրբի, Լուսին 6, Բօլքօսիկ 5 ու կէս, Ավթի 2, Հայր Աբրահամ 2, Բազէ 2: Գուլար 53 ուրբի 50 կօպէկ:

#### ՈՍԿԵՂԱՆՅՐ ԿՕՖԻՏԷՆ՝

Տ. Էն 67 անգլ. ոսկի 20 շիլլին, Ապիլ Մըսէ 10 դահեկան, Որոտում խ. 25 (ողշ), Մ'կրաս 20, Անուշաւան խ. 44, Թովմաս-զալֆա 5:

Արշակաւանէն Երկիւղած խ. 20 դահեկան, Անձնագր խ. 15:

#### ԱԼԵՍԱՆԳՐԻՈՑ ԿՕՖԻՏԷՆ՝

1898 մարտ, ապրիլ եւ մայիս ամիսներուն մէջ. Մեղու 90 դահեկան ողշ, Գօզան պէյ 90, Նըգօ 75, Ե. Ազիզ, Պօլսեցի 60-ական, Գ. Լուսանեան, Կիւլէէ Միւրթիւր Փիլոսօփին է, Մայր Հայաստան, Տիկին Շուշանիկ, Քէշեշեան, Սըտոս, Յոյս 30-ական, Տիրաբու, Ե. Կազ. 24-ական, Յուլան, Եր. Դերօ, Համեստ 20-ական, Իցարիթաւաս, Զաշ Մ. 15-ական, Կոն 10, Ազատ 5, Գանձանակէն հասոյթ 125: Գումար 893 դահեկան ողշ:

#### ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՕՖԻՏԷՆ՝

1897 տարեշրջանին մէջ ստացած է 557 ուլլար:

#### ԿԻՊՐՈՍ X. քղ.-ի ԿՕՖԻՏԷՆ՝

Միւստօր 2 շիլլին, Արա 3 շիլ, Զաւիլուս 1 շիլ, Պեա 1 շիլ, Հայկ 1 շիլ, Բէհիս 2 շիլ, Զ. 5 շիլ: — Գումար 15 շիլլին:

Խմբագրութեան գիմել հետեւալ հասցեով՝  
 Rédaction du Droschak, Genève (Suisse)